

# Ո՞ր երկիրն է Պատասխանատու ձեր ապաստանի հայցի համար

Դուբլինյան ընթացակարգ

## Ինչո՞ւ է տրվում այս բրոշյուրը

Դուք ապաստան եք խնդրել Նիդերլանդներում: Սակայն օտարերկրացիների հարցերով զբաղվող ոստիկանության (AVIM) և / կամ Թագավորական սահմանապահ ոստիկանության քննությունից պարզվում է, որ, հնարավոր է, որ այլ երկիր է պատասխանատու ձեր ապաստանի հայցը քննարկելու համար:

Այս բանի համար կարող են տարբեր պատճառներ լինել: Օրինակ.

- Դուք փաստաթղթեր եք ներկայացրել օտարերկրացիների հարցերով զբաղվող ոստիկանությանը կամ Թագավորական սահմանային ոստիկանությանը: Այդ փաստաթղթերից պարզվում է, որ դուք մինչև Նիդերլանդներ գալը մեկ այլ եվրոպական երկրում եք եղել, կամ դուք ունեք այցեքարտ մեկ այլ եվրոպական երկրի համար: Դրա պատճառով այդ երկիրը կարող է պատասխանատու լինել ձեր ապաստանի հայցի քննարկման համար:
- Օտարերկրացիների հարցերով զբաղվող ոստիկանությունը կամ Թագավորական սահմանային ոստիկանությունը վերցրել է ձեր մատնահետքերը և ստուգել, թե արդյոք դրանք արդեն հանդիպել են Eurodac կամ EUVIS հեմքում: Սրանք համակարգիչներ են, որոնցում գրանցված են բոլոր այն մարդկանց մատնահետքերը, ովքեր որևէ եվրոպական երկրից ապաստան կամ այցեքարտ են խնդրել: Այս կերպ քննվում է, թե արդյոք դուք նախկինում դիմել եք արդեն մեկ այլ եվրոպական երկրի՝ ապաստանի կամ այցեքարտի համար: Այդ պատճառով էլ այդ երկիրը կարող է պատասխանատու լինել, ինչ վերաբերում է ձեր ապաստանի հայցի քննարկմանը:

Այժմ IND-ն կքննի, թե իսկապես մեկ այլ երկիր է պատասխանատու ապաստանի ձեր դիմումի հարցում, թե ոչ: Այդ պատճառով էլ ապաստանի ձեր ընթացակարգը այլ կերպ կընթանա, քան նկարագրված է ,Մինչև ձեր ապաստանի ընթացակարգը սկսվելը և, Ձեր ապաստանի ընթացակարգը բրոշյուրներում: Սույն բրոշյուրում դուք կկարդաք իմանալու, թե ինչումն է կայանում այդ տարբերությունը:

## Գուբլինի հարցազրույց

IND-ի աշխատակցի հետ դուք միայն մեկ պաշտոնական հարցազրույց կունենաք ձեր ինքնության, ազգության, ճանապարհին վերաբերյալ: Աշխատակիցը ձեզ կհայտնի ձեր փաստաթղթերին և մատնահետքերին վերաբերող բնութային արդյունքների մասին: IND-ի աշխատակիցն այդ ամենի վերաբերյալ մի շարք հարցեր կտա: Այս հարցերը չեն լինի այն մասին, թե ինչու եք լքել ձեր երկիրը: Այս գրույցի ընթացքում դուք կարող եք ասել, թե ըստ ձեզ ինչու պետք է Նիդերլանդները քննարկի ձեր ապաստանի հայցադիմումը, և որոնք են ձեր հավանական առարկություններն այլ երկիր տեղափոխվելու հետ կապված:

IND-ի հարցազրույցի ժամանակ ներկա է լինելու թարգմանիչ: IND-ի աշխատակիցն իր հարցերը կտա հոլանդներեն լեզվով: Թարգմանիչը կթարգմանի այդ հարցերը ձեզ համար հասկանալի լեզվով: Թարգմանիչը հոլանդներեն կթարգմանի նաև ձեր պատասխանները: Թարգմանիչը անկախ է և որևէ ազդեցություն չունի ապաստանի ձեր հայցի որոշման վրա: Եթե դուք և թարգմանիչը միմյանց լավ չկարողանաք հասկանալ, ապա այդ մասին անմիջապես ասեք: Այդ ժամանակ IND-ի կողմից մեկ այլ թարգմանիչ կնշանակվի: Կարևոր է, որ սխալ տեղեկություններ չգրանցվեն՝ հարցերը լավ չհասկանալու հետևանքով:

Այդ հարցազրույցից հետո IND-ն կ քննարկի, թե արդյոք մեկ այլ երկիր է պատասխանատու ձեր ապաստանի դիմումի համար, թե ոչ: Այդ քննարկման արդյունքով կորոշվի, թե ինչպես կշարունակվի ձեր ապաստանի ընթացակարգը: Կան երկու հնարավորություններ.

1. IND-ն կ եզրահանգի, որ ձեր ապաստանի ընթացակարգի քննարկման համար պատասխանատու է Նիդերլանդները: Ձեր ապաստանի ընթացակարգն սովորաբար կընթանա ինչպես որ նկարագրված է .Ձեր ապաստանի ընթացակարգը բրոշյուրում:
2. IND-ն կ եզրահանգի, որ մեկ այլ երկիր է պատասխանատու ձեր ապաստանի ընթացակարգի քննարկման համար: Այնուհետև IND-ն կառաջարկի, որ այդ երկրին իր վրա վերցնի ձեր ապաստանի ընթացակարգի հարցը: Ստորև դուք կարող եք կարդալ այն, թե այդ դեպքում ինչպես կշարունակվի ձեր դուբլինյան ընթացակարգը Նիդերլանդներում:

## Նախնական որոշում

Դուք (ձեր փաստաբանի միջոցով) IND-ից մի նամակ կստանաք, որում գրված կլինի, որ IND-ն նախնական որոշում է կայացրել (այսինքն՝ մտադիր է), չքննարկել ձեր ապաստանի հայցը: Սա նշանակում է, որ IND-ն ձեր ապաստանի դիմումը ըստ գործի բնույթի չի քննարկի, քանի որ դա մեկ այլ երկիր վրա է դրվելու: Նամակում գրված է կլինի նաև այդ նախնական որոշումն ընդունելու պատճառները, և թե ինչ հետևանքներ ունի այն ձեր ապաստանի դիմումի հարցում:

## Հարցազրույցի քննարկում և կարծիք

Ձեր փաստաբանը ձեր հետ կքննարկի ձեր հարցազրույցի գեկուցագիրը և նախնական որոշումը: Այդ գրույցի ժամանակ նույնպես ներկա կգտնվի մի թարգմանիչ, և նա կօգնի, որպեսզի դուք և ձեր փաստաբանն իրար հասկանաք: Եթե գեկուցագրում որևէ բան բացակայի կամ ճիշտ գրանցված չլինի, ապա ձեր

փաստաբանն այդ մասին նամակով կհայտնի IND-ին: Ձեր փաստաբանը կարող է նաև IND-ին գրավոր կարծիք ուղարկել, որով դուք պաշտոնապես կարճագանք եք IND-ի նախնական որոշմանը և կհայտնեք, թե դուք ինչու համամիտ չեք այդ որոշմանը

## IND-ի որոշումը

Նախնական որոշման մասին ձեր արձագանքը ( կարծիքը) ընթերցելուց հետո IND-ն կքննարկի հետևյալը՝ արդյոք պետք է նախնական որոշումը փոփոխել, թե ոչ: Այս քննության արդյունքը կրկին որոշիչ է՝ կապված ձեր ապաստանի ընթացակարգի շարունակության հետ: Տվյալ դեպքում կան երկու հնարավորություններ

1. IND-ն մնում է այն կարծիքին, որ ձեր ապաստանի հայցի քննարկման համար պատասխանատու է մեկ այլ երկիր, որն էլ պատրաստ է ձեր ապաստանի հայցն ընդունել Նիդերլանդներից: Դուք IND-ից կ ստանաք (փաստաբանի միջոցով ) մի նամակ (վճիռ), որում գրված կլինի, որ ձեր ապաստանի դիմումը չի քննարկվելու: Այդ նամակի հետ միասին դուք նաև կստանաք առանձին մի տեղեկություն մերժման հետևանքի վերաբերյալ, թե դուք այդ դեպքում մերժման դեմ ինչ եք կարող անել, ինչպես նաև ձեր վերադարձի հնարավորությունների մասին: Այդ որոշման մեջ նաև գրված կլինի, կայացրած որոշման պատճառները, և թե ինչ հետևանքներ ունի այն: Ձեր փաստաբանը ձեր հետ միասին կքննարկի այդ որոշումը:
2. Ձեր արձագանքը ( կարծիքը) ընթերցելուց հետո IND-ն կարող է գտնել, որ, այնուամենայնիվ, ձեր ապաստանի հայցի քննարկման համար պատասխանատու է Նիդերլանդները: Այնուհետև IND-ն ձեր ապաստանի դիմումը կքննարկի ապաստանի ընդհանուր ընթացակարգում: Դուք կստանաք մեկ այլ բրոշյուր ապաստանի ընդհանրական ընթացակարգի մասին:

## Գուբլինյան որոշումից հետո

Եթե ձեր ապաստանի հայցի քննարկման համար պատասխանատու է մեկ այլ երկիր, ապա IND-ն կդիմի մյուս երկրին, որպեսզի այն ընդունի ձեր ապաստանի հայցը: Սա կոչվում է ընդունման կամ հետ ընդունման դիմում: Երբ այս երկիրը ընդունի նման դիմում, ապա IND-ն կդիմի Վերադարձի և մեկնման ծառայությանը, որպեսզի կազմակերպվի ձեր մեկնումը դեպի այդ երկիր: Սա նշանակում է, որ ձեզ կտեղափոխեն այդ երկիր՝ մյուս երկրի կողմից ընդունման կամ հետ ընդունման դիմումի համաձայնությունից վեց ամսիս հետո ո: Դուք կարող եք, այդ խնդիրը ձեր փաստաբանի հետ քննարկելուց հետո, բողոքարկել ձեր ապաստանի դիմումի՝ այլ երկիր տեղափոխելու IND-ի որոշման դեմ: Սա նշանակում է, որ դուք պաշտոնապես կհայտնեք դատավորին, որ դուք համամիտ չեք IND-ի որոշմանը: Սկզբունքորեն դուք իրավունք չունեք դատավորի վճռի սպասել Նիդերլանդներում: Դուք կարող եք ճշտել դատավորից, թե արդյոք իրավունք ունեք բողոքարկման ընթացակարգի ժամանակահատվածում մնալ Նիդերլանդներում: Ձեր փաստաբանը կօգնի ձեզ դիմել դատավորին նաև այդ հարցով: Այնուհետև դատավորը կքննարկի, թե արդյոք IND-ն Նիդերլանդների օրենքը և դուբլինյան որոշումը ճիշտ է կիրառել՝ ձեր ապաստանի դիմումի որոշում կայացնելիս, թե ոչ:

# Ինչ կազմակերպությունների հետ դուք կառնչվեք



COA Centraal Orgaan opvang asielzoekers

**Փախստականների ընդունելության կենտրոնական մարմինը (COA)** հիոգ է տանում Նիդերլանդներում փախստականների ընդունելության և ընդունելության ընթացքում ուղեկցելու համար: COA-ն հոգ է տանում, որ դուք կացարան, կերակուր և հիվանդության ծախսերի ապահովագրություն ստանաք: Դուք կարող եք նաև դիմել COA-ին, որպեսզի օգնի ձեզ կապ հաստատելու բժշկի հետ: COA-ն անկախ կազմակերպություն է և ձեր ապաստանի դիմումի վերաբերյալ որոշում չի կայացնում:



**Ապաստան հայցողների առողջապահության բաժինը (GZA)** կազմակերպություն է, որին կարող եք դիմել հիվանդանալու դեպքում կամ առողջական ցանկացած հարցերով: Ապաստան հայցողների կենտրոնացման ցանկացած բաժնում (COA) կամ Ապաստան հայցողների կենտրոնացման բաժնին մոտ (COA) գործում է Ապաստան հայցողների առողջապահության բաժինը (GZA): GZA բաժինը ձեր համար կարող է հանդիպումներ կայացնել որևէ բժշկի օգնականի, բուժքրոջ, GZA բաժնի հերթապահ բուժօգնողի կամ տնային բժշկի հետ: Ցերեկվա կամ գիշերվա ցանկացած ժամերին դուք կարող եք զանգահարել առողջապահությանը վերաբերող հարցերով զբաղվող հերթապահ բաժնի հետևյալ հեռախոսահամարով՝ 088 112 21 12: Առողջապահությանը վերաբերող հարցերով երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ կարող եք զանգահարել նշված հեռախոսահամարով, օրինակ, եթե կարիք ունեք ստանալ ուղեգիր որևէ բժշկի/ բուժմասնագետի դիմելու համար:



**Նիդերլանդների Փախստականների աջակցության կենտրոնը** մարդու իրավունքների անկախ մի կազմակերպություն է և ստեղծված է փախստականների շահերը պաշտպանելու համար: Փախստականների աջակցության կենտրոնը ձեզ տեղեկություններ է տրամադրում և բացատրում ապաստանի գործընթացը, տեղեկացնում է և օժանդակում անձամբ ձեզ այս ընթացակարգի ժամանակ և միջնորդում այլ կազմակերպությունների հետ խնդիրներ ունենալիս: Կենտրոնը սերտ համագործակցում է ձեր փաստաբանի հետ: Փախստականների աջակցության կենտրոնը ձեր ապաստանի դիմումի վերաբերյալ որոշում չի կայացնում:

## Raad voor Rechtsbijstand legal aid

**Իրավաբանների պալատը** հոգ է տանում, որպեսզի դուք ստանաք փաստաբանի օգնություն, երբ դուք ինքներդ չեք կարող վճարել: Իրավական աջակցության խորհուրդը

վարձատրում է այս փաստաբանին ձեզ ցուցաբերած օգնության համար: Փաստաբանը չի ծառայում Իրավական աջակցության խորհրդում: Փաստաբանը անկախ իրավական աջակցություն տրամադրող է, ով աջակցում է ձեզ ձեր ապաստանի ընթացակարգում



Immigratie- en Naturalisatiedienst  
Ministerie van Veiligheid en Justitie

**Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը (IND)** Նիդերլանդների Արդարադատության և անվտանգության նախարարության բաժանմունքներից մեկն է: IND-ի աշխատակիցները ձեզ հետ զրույցներ են վարում ձեր ինքնության, ազգության, ճանաչողության ուղու և ձեր երկրից մեկնելու պատճառների վերաբերյալ: Նրանք քննում են ձեր անձնական պատմությունը և ձեր երկրի իրավիճակը: Դրանից հետո նրանք որոշում են, արդյոք դուք կարող եք (ժամանակավորապես) մնալ Նիդերլանդներում թե պետք է վերադառնաք ձեր սեփական երկիր:



IND-ի մասնաշենքերում և COA-ի ընդունելության կենտրոններում կան **հսկիչներ**: Դուք նրանց կհանաչեք իրենց համազգեստից: Նրանց ներկայությունը ձեր անվտանգության համար է: Դուք կարող եք նաև նրանց հարցեր տալ, թե ինչն է թույլատրվում կամ չի թույլատրվում IND-ի և COA-ի մասնաշենքերում և տարածքներում: Այս հսկիչները ազդեցություն չունեն ձեր ապաստանի դիմումի որոշման վրա:



Dienst Terugkeer en Vertrek  
Ministerie van Veiligheid en Justitie

**Վերադարձի և մեկնման ծառայությունը (DT&V)** Նիդերլանդների Արդարադատության և անվտանգության նախարարության բաժանմունքներից մեկն է: Եթե ձեր ապաստանի դիմումը մերժվում է IND-ի կողմից, DT&V-ի աշխատակիցն օգնում է ձեզ կազմակերպել վերադարձը դեպի ձեր երկիր:



**Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (IOM)** անկախ կազմակերպություն է, որն օժանդակում է աշխարհում սիոված գաղթականներին: IOM-ը կարող է օգնել, երբ դուք կամեճում եք ինքնուրույն լքել Նիդերլանդները: IOM-ը տալիս է գործնական տեղեկություն վերադարձի և վերաինտեգրման վերաբերյալ և ուղեկցում է ձեզ Նիդերլանդներից ձեր մեկնումը կարգավորելու ժամանակ: Դուք կարող եք խնդրել Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակցին կամ ձեր փաստաբանին այս հարցում ձեզ օգնելու համար:

## Անձնական տվյալների մշակումը

Անձնական տվյալները ձեր անձին վերաբերող բոլոր տեսակի տեղեկություններն են: Ստորև գրված է այս գրքուկով զբաղվող բոլոր կազմակերպությունների անունները: Այդ կազմակերպությունները մշակում են ձեր անձնական տվյալները՝ ապաստանի հայցի, դիմումի կամ որևէ խնդրանքի դեպքում: Նրանք դիմում են ձեզ՝ իմանալու ձեր, ինչպես նաև այլ կազմակերպությունների կամ մարդկանց տվյալների մասին, եթե կա դրա անհրաժեշտությունը: Այս կազմակերպությունները օգտագործում և պահում են ձեր տվյալները և փոխանցում դրանք այլ կազմակերպությունների, եթե դա պահանջվում է ըստ օրենքի: Գաղտնիության օրենսդրության մեջ նշված է ձեր տվյալները մշակող կազմակերպություններին վերաբերող պարտավորությունների մասին: Օրինակ՝ նրանք պետք է ուշադիր և անվտանգ ձևով առնչվեն ձեր անձնական տվյալներին: Գաղտնիության օրենսդրության մեջ նշված է նաև ձեր իրավունքների մասին, օրինակ՝

- կազմակերպություններում թափանցել ձեր տվյալներին վերաբերող հարցերում;
- տեղեկանալ, թե կազմակերպությունները ինչու և ինչ նպատակով են օգտագործում ձեր տվյալները;
- տեղեկանալ, թե նրանք որ կազմակերպություններին են փոխանցել ձեր տվյալները:

Ցանկանում եք ավելի իմանալ ձեր անձնական տվյալների և իրավունքների մասին, ապա կարող եք մուտք գործել այդ կազմակերպությունների կայքերը: Այս գրքուկի ստորին մասում գրված է այդ կայքերի հասցեները:

## Հաճախ տրվող հարցեր

**Որտեղ եմ ես ապրելու դուրսիցիան ընթացակարգի ժամանակ**  
Դիմելու ընթացակարգն անցնելուց հետո դուք կապրեք փախստականների կենտրոններից մեկում: Եթե IND-ն հետագայում այդուհանդերձ որոշում կայացնի ձեր հայցը քննարկել ըստ գործի էության, ապա ձեզ կտեղափոխեն այսպես կոչված գործընթացային կացարան (POL), և ձեզ համար կկիրառվի ապաստանի ընդհանրական ընթացակարգ:

**Ունե՞ք հարցեր այս բրոշյուրը կարդալուց հետո**  
Դուք կարող եք այդ հարցերը տալ ձեր փաստաբանին կամ COA-ի, IND-ի կամ Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցներից մեկին:

**Որևէ բողոք ունե՞ք**  
Բոլոր կազմակերպությունները, որոնք ներգրավված են ապաստանի ընթացակարգում, փորձում են աշխատել պրոֆեսիոնալ և հոգատար: Սակայն, եթե դուք գտնում եք, որ որևէ կազմակերպություն ձեր նկատմամբ ոչ ճիշտ վերաբերմունք է ցուցաբերել, ապա դուք կարող եք բողոքել: Նման հարցում ձեզ կարող է օգնել ձեր փաստաբանը կամ Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցներից մեկը:

**Այս տեղեկատվությունը հեռուկալ կազմակերպությունների միասնական հրապարակումն է.**  
Centraal Orgaan opvang asielzoekers | [www.coa.nl](http://www.coa.nl)  
Փախստականների ընդունելության կենտրոնական մարմին  
Dienst Terugkeer en Vertrek | [www.dienstterugkeerenvertrek.nl](http://www.dienstterugkeerenvertrek.nl)  
Վերադարձի և մեկնման ծառայություն  
Immigratie- en Naturalisatiedienst | [www.ind.nl](http://www.ind.nl)  
Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն  
Raad voor Rechtsbijstand | [www.rvr.org](http://www.rvr.org)  
Իրավական աջակցության խորհուրդ  
VluchtelingenWerk Nederland | [www.vluchtelingenwerk.nl](http://www.vluchtelingenwerk.nl)  
Նիդերլանդների փախստականների աջակցության կենտրոն

Ministerie van Veiligheid en Justitie, directie Migratiebeleid  
[www.rijksoverheid.nl](http://www.rijksoverheid.nl)  
Հրապարակվել է Արդարադատության և անվտանգության նախարարության միգրացիայի վարչության հանձնարարությամբ:

Այս հրատարակման բովանդակությունը չի կարող ձեզ իրավունքներ վերապահել: Եթե թարգմանությունը առաջացնում է մեկնաբանությունների տարբերություններ, ապա գործում է հոլանդերեն տարբերակը: